ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ (պարբերացման փորձ)

ԱՐՄԵՆ ԽԱՉԻԿՅԱՆ

Հայ-պարթևական հարաբերություններն ընդգրկում են ընդարձակ մի ժամանակաշրջան՝ մ. թ. ա. II դ. վերջերից մինչև մ. թ. 226 թ.՝ Պարթևական տերության անկումը։ Մոտ երեքուկեսդարյա այս ժամանակաշրջանը պատմական իրադարձությունների ընթացքով բաժանվում է երկու համարյա հավասար ժամանակահատվածների, ընդ որում ժամանակաբաժան է հանդիսանում Տրդատ I Արշակունու Հայոց արքա հաստատվելու ժամանակամիջոցը՝ 51—66 թթ.։ Եթե մ. թ. 66—226 թթ. ժամանակահատվածի համար բնորոշ է հայ-պարթևական հարաբերությունների համեմատական կայուն և անփոփոխ բարի դրացիությունն ու դաշինքը, ապա նախորդ ժամանակահատվածը բնորոշվում է այդ հարաբերությունների հաճախակի փոփոխությամբ, գերիշխանության համար պայքարով՝ և մրցակցությամբ։

Փորձենք տալ հայ-պարթևական հարաբերությունների առաջին ժամանակահատվածում (մ. թ. ա. II դ. վերջ և մ. թ. I դ. առաջին կես) Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության վարած քաղաքականության պարբերացումը։

Այլ հարցերի հետ մեկտեղ, իրենց աշխատություններում Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության վարած քաղաքականության հարցին անդրադարձել են Հ. Աստուրյանը, Ն. Դեբևոյսը, Հ. Մանանդյանը, Կ. Ցիգլերը, Թ. Մոմզենը, Ա. Բոկշչանինը, Գ. Սարդայանը, Ս. Երեմյանը և ուրիշներ[1]։ Սակայն նշված դրականության մեջ հարցը հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել, թեև նրա առանձին ժամանակահատվածներ լուսաբանվել են։

Ուսումնասիրվող ժամանակահատվածի դեպքերի շարադրանքը մեզ է հասել Տակիտոսի, Դիոն Կասիոսի, Հովսեփոս Փլավիոսի, Սվետոնիոսի, Պլուտարքոսի աշխատություններում։ Առանձին կարևոր տեղեկություններ են հաղորդում Ստրաբոնը, Պոմպեոս Տրոգոսը, Ապպիանոսը, Պլինիոս Ավագը, Ցիցերոնը։ Որոշ մտորումների տեղիք է տալիս նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»։

Ըստ պահպանված տեղեկությունների, հայ-պարթևական հարաբերություններն ի սկզբանե մրցակցային բնույթ են ընդունել թուլացող և մասնատվող Սելևկյան տերության տերիտորիալ ժառանգորդման հարցում։ Հաջողությունը նախ պարթևների կողմն էր, սակայն Տիգրան II-ի (95—55) կառավարման ոկզբում զորեղացած Հայաստանը, հաջողությամբ մրցակցելով Պարթևական տերության հետ, կարողացավ ժամանակավորապես իր գերիշխանությունը հաստատել Առաջավոր Ասիայում, իրեն ենթարկել մինչ այդ պարթևներին հպատակ ընդարձակ տարածություններ Մարաստանում և Հյուսիսային Միջագետքում, տիրանալ Սիրիայի և Փյունիկիայի զարգացած հելլենիստական քաղաքներին և իր ախոյանին զրկել միջերկրածովյան երկրների հետ անմիջական կապերից։ Հայաստանի հզորությունը, սակայն, տևական չեղավ՝ բախվելով նոր նվաճումների ձգտող Հռոմեական հանրապետության շահերին։ Հռոմը, հանձինս Պոմպեոսի, կարողացավ հաջողությամբ օգտագործել հայ-պարթևական մրցակցությունը հոգուտ իրեն, դաշինք կնքելով պարթևների հետ ընդդեմ Հայաստանի։ Օգտվելով հայ-հռոմեական պատերազմից, Պարթևական տերությունը վերագրավեց Հայաստանի նվաճած տարածքները Մարաստանում և Հյուսիսային Միջագետքում։ Պարթևական զորքերը նույնիսկ ներխուժեցին Հայաստան և պաշա-

---

1 Հ. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռովմա, Վենետիկ, 1912, Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, N. Debevoise, A political history of Parthia, Chicago, 1938; K. Ziegler, Die Beziehungen zwischen Rome und dem Parterreich, Wiesbaden, 1964; Т. Моммзен, История Рима, т. У, М., 1936; А. Бокщанин, Парфия и Рим, ч. П, М., 1936.

ռեցին Արտաշատը[2]։ Երկու ճակատով պատերազմելու սպառնալիքի տակ Տիգրան II-ը հրաժարվեց իր նվաճումներից Սիրիայում և Փյունիկիայում՝ հօգուտ Հռոմի։ Հայ-պարթևական մրցակցությունը, սակայն, դրանով չավարտվեց։

Հռոմի արևելյան քաղաքականությունը Առաջավոր Ասիա նրա ներթափանցման ամենասկզբից ուղղված էր տվյալ ռեգիոնում իր անբաժան տիրապետության հաստատմանը՝ տրնտեսապես զարգացած և ստրատեգիապես կարևոր տարածքների աստիճանական անեքսիայի միջոցով։ Սակայն Առաջավոր Ասիայի պետությունների և ժողովուրդների ցույց տված ուժեղ, տևական դիմադրությունը Հռոմին հարկադրեց արդեն նվաճված տերիտորիաների պաշտպանությունը այլահովել սահմանային կախյալ պետությունների համակարգի միջոցով, որն իր վրա պետք է ընդուներ թշնամու առաջին հարվածը, մի տեսակ «բուֆեր» հանդիսանալով հակառակորդ կողմերի միջև։ Հռոմը ժամանակավորապես նույնիսկ օժանդակում և ամրապնդում էր դաշնակից «բուֆերային» պետություններին, ընդարձակում նրանց սահմաններն ի հաշիվ ուրիշների հետ վիճելի երկրամասերի։ Տվյալ դեպքում արդեն Տիգրան II-ի հետ Պոմպեոսի կնքած դաշնագրի հետևանքով Հայաստանը «բուֆերի» դեր պետք է կատարեր Հռոմի և Պարթևական տերության միջև, ապահովելով Հռոմի արևելյան տիրույթների անվտանգությունը։

Աղբյուրները վկայում են, որ Հայաստանը Պոմպեոսի բացահայտ օժանդակությամբ կարողացավ իր գերիշխանությունը պահպանել Կորդուքի և Հայոց Միջագետքի՝ պարթևների կողմից վիճարկվող տարածքների վրա։ Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հռոմի կողմից հայ-պարթևական թշնամության գիտակցական հրահրում իր տիրույթների ապահովության համար և բարեկամական փոխհարաբերությունների ցուցադրում դաշնակից Հայաստանի նկատմամբ։

Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության քաղաքականության մեջ էական փոփոխություն է նկատվում Առաջավոր Ասիայում հռոմեական ագրեսիայի հետագա ուժեղացման հետ կապված։ Մ. թ. ա. 54 թ. Կրասոսի սկսած պարթևական արշավանքն արմատապես փոխեց միջագետքյան քաղաքական վիճակն Առաջավոր Ասիայում։ Այժմ արդեն երկու հակառակորդի դեմ պատերազմելու սպառնալիքը կախված էր Պարթևական տերության վրա։ Հայոց Արտավազդ II արքան մտադիր էր անմիջական մասնակցություն ունենալ Կրասոսի արշավանքին։ Նա նույնիսկ առաջարկեց հռոմեական բանակն անցկացնել Հայաստանի տարածքով և հայկական զինված ուժերի մոտ կսար նրան միացնել[4]։ Ստեղծված իրավիճակում Պարթևական տերությունը արմատապես փոխեց իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, ձգտելով «հաշտվել հայերի հետ և դաշնակից ձեռք բերել»[5] սկսված պատերազմում։

Աղբյուրների վկայությամբ Պարթևական Օրոդես թագավորը ներխուժում է Հայաստան, ձգտելով խանգարել հայ զորքերին՝ միանալու Կրասոսի բանակին[6]։ Հայոց Արտավազդ II արքային, որը փորձում է նամակով բացատրել իր օժանդակության բացակայության պատճառը, Կրասոսը անբարկամիտ պատասխան է տալիս, թե «ինքը հիմա ժամանակ չունի զբաղվելու Հայաստանով, բայց հետո կվերադառնա և հաշիվ կտեսնի Արտավազդի հետ դավաճանության համար»[7]։ Դրան հակառակ պարթևական թագավորը Հայաստանին հաշտության առաջարկ է անում։ Կրասոսի նման պատասխանից հետո, ստեղծված պարագաներում «Արտավազդի միակ ճիշտ և բնական քայլը պիտի լիներ փորձել խաղաղեցնել ներխուժած պարթևներին, համաձայնության գալով նրանց հետ»[8]։ Այս հանգամանքներն էին պատճառը, որ Հայաստանը փոխեց իր դիրքորոշումը և մ. թ. ա. 53 թ. բարեկամական դաշինք կնքեց Պարթևական տերության հետ։ Դաշինքն ամրապնդվեց դինաստիական ամուսնությամբ՝ Արտավազդ II-ի քույրը կնության տրվեց պար-

---

[2] Cassius Dio, Historia Romana, XXXVI, 51, 2.

[3] Plutarchi, Pompeius, 36; Cass. Dio, XXXVII, 7, 3; Appiani, Mithridatica, 106.

[4] Plutarchi, Crassys, 19, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 605—606։

[5] Cass. Dio, XXXVII, 7, 4.

[6] Plut., Crass., 33; Cass. Dio, XL, 16, 1—3.

[7] Plut., Crass., 22.

[8] «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 608։

թե թագաժառանգ Բակուրին[9]։ Հայ-պարթևական մրցակցությունն այսպիսով փոխարինվեց դաշնակցությամբ՝ ընդդեմ երկուստեք սպառնացող հռոմեական ագրեսիայի։

Հ. Աստուրյանի կարծիքով հայ-պարթևական մրցակցությունը շարունակվել է մինչև Անտոնիոսի կողմից Արտավազդ II-ի գերեվարվելը[10], ինչը, սակայն, բերվող փաստերով հերքվում է։ Խառանի մոտ Կրասոսի բանակի ջախջախումը պատմական մեծ նշանակություն ունեցավ Մերձավոր արևելքի երկրների համար։ Հռոմեացիների անպարտելիության փառքը հօդս ցնդեց, մեկուկես տասնամյակով կանգ առավ հռոմեական հետագա ագրեսիան դեպի Արևելք, ինչին, իհարկե, շատ բանով նպաստեց նաև Հռոմում ծավալված քաղաքացիական պատերազմը Կեսարի և Պոմպեոսի միջև։ Հռոմեական բանակի պարտության ուղղակի հետևանքներից կարևորագույնն այն էր, որ Առաջավոր Ասիայում հռոմեական տիրույթները մնացին անպաշտպան, իսկ նրանց աղքատնակությունը, որն արդեն մեկ տասնամյակ ճաշակում էր հռոմեական տիրապետության պտուղները, ազատագրության հույսեր ունեցավ[11]։

Դիոն Կասիոսի վկայությամբ, մ. թ. ա. 51 թ. արքայազն Բակուրի և զորավար Օսակեսի գլխավորությամբ պարթևական զորքերը ասպատակում են անպաշտպան մնացած հռոմեական Ասորիքը[12]։ Ուսումնասիրողներից ոմանք հանձինս Օսակեսի տեսնում են հայ (Վասակ) զորավարի և հավանական համարում հայկական զորամասերի մասնակցությունն այս և հետագա արշավանքներին[13]։ Այս ենթադրությունը հաստատվում է Ցիցերոնի վկայությամբ, որ հռոմեական իշխանությունները վախենում էին հայկական զորքերի ներխուժումից Կապադովկիա և Կիլիկիա։ Ցիցերոնը, որն այս ժամանակ Հռոմի կուսակալն էր Կիլիկիայում, իր գործողություններով կանխում է սպասվող արշավանքը[14]։ Մ. թ. ա. 50 թ. ամռանը Օսակեսը սպանվում է մարտում, իսկ Բակուրը հետ է կանչվում հռոմեական դիվանագիտության հրահրած պայատական խարդավանքների պատճառով։ Աղբյուրները վկայում են, որ Ասորիքի նմանօրինակ ասպատակություններն ընդմիջումներով շարունակվում են և հետագա տարիներին[15]։

Մ. թ. ա. 40 թ. պարթևական զորքերը, հավանաբար հայ զորամասերի մասնակցությամբ, հռոմեացի վտարանդի Քվինտոս Լաբիենոսի, արքայազն Բակուրի և զորավար Բարզափրանի հրամանատարությամբ ներխուժեցին Կոմագենե, Ասորիք, Պաղեստին և առաջացան Ծոքր Ասիայի խորքերը[16]։ Այս անգամ արդեն Հռոմի արևելյան տիրույթները հակառակորդի կողմից գրավվելու լուրջ սպառնալիք ստեղծվեց։ Հռոմեական Արևելքի կառավարիչ Անտոնիոսը ստիպված էր թշնամուն դիմագրավելու համար այստեղ նոր լեգեոններ ուղարկել։ Մ. թ. ա. 38 թ. Ասորիքում Անտոնիոսի տեղապահ Վենտիդիոս Բասսոը կարողացավ ջախջախել պարթևական զորքերը։ Արքայազն Բակուրը սպանվեց մարտում, իսկ պարթևների կողմն անցած քաղաքներն ու երկրամասերը դարձյալ հպատակեցվեցին Հռոմին։

Արքայազն Բակուրի մահը դինաստիական փոփոխություններ առաջացրեց Պարթևական արքունիքում։ Մ. թ. ա. 37 թ. Օրոդես II-ը արքայական գահը հանձնեց իր բազմաթիվ որդիներից ավագին՝ Հրահատ IV-ին[17]։ Հաստատվելով գահին, Հրահատն առաջին հերթին սպանել տվեց հորը[18]։ Պոմպեոս Տրոգոսի հաղորդմամբ Հրահատը նաև հրամայեց սպանել իր երեսուն եղբայրներին իրենց ընտանիքներով և անգամ չափահաս որդուն՝ «որպեսզի չմնա մեկը, որին կարելի լինի թագավոր կարգել իր փոխարեն»[19]։ Պետք է կարծել, որ նման ճակատագիր վիճակվեց

---

[9] Cicero M., Epistolae ad familiares, XV, 3, 1; Plut., Crass., 33.

[10] Հ. Աստուրյան, նշվ. աշխ., էջ 161—162:

[11] Cass. Dio, XL, 28.

[12] Նույն տեղում։

[13] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 252, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 610. Г. Халатянц. Очерк истории Армении, М., 1910, с. 230.

[14] Cicero, Epist. ad famil., XV, 2, 3.

[15] Appianis, Bella civila, IV, 58.

[16] N. Debevoise, նշվ. աշխ., էջ 109.

[17] Justini, Epitoma, XLII, 11, 16; Cass. Dio, XLIX, 23.

[18] Plut., Crass., 33.

[19] Just., XLII, 5, 1—2.

նաև Բակուրի կնոջն ու զավակներին որպես գահի հնարավոր թեկնածուների և որոնց համար Արտավազդ II-ը եզրայր և քեռի էր հանդիսանում։

Սկզբնաղբյուրներում պահպանված այս տեղեկությունները բերում են այն եզրակացության, որ նշված իրադարձությունների հետևանքով հայ-պարթևական դաշնակցությունը հավանաբար ժամանակավորապես խախտվեց կամ էլ իր ուժը կորցրեց։ Հայաստանի և Պարթևական տերության դաշնակցության խզման այս հավանական պատճառը, ինչպես և բուն փաստը, զուրկ են մնացել ուսումնասիրողների ուշադրությունից։ Վ. Տարնը, օրինակ, գտնում է, որ Արտավազդ II-ը զոնե գաղտնի բարեկամական հարաբերություններ ուներ Հրահատ IV-ի հետ՝ ընդդեմ հռոմեացիների[20]։ Նման պնդումը, կարծում ենք, հեռու է ճշմարտությունից։ Որ Օրոդես II-ի սպանությունից հետո հայ-պարթևական դաշնակցությունը ժամանակավորապես խզված էր, վկայում է այն փաստը, որ Անտոնիոսի բարոյալքված բանակն անհաշող պարթևական արշավանքից հետո Հայաստանում ընդունելություն գտավ և պարենավորվեց։ Արտավազդ II-ի և Հրահատ IV-ի թեկուզև գաղտնի դաշնակցության դեպքում այն պարզապես կոչնչացվեր։ Իհարկե, իրադարձությունների բերումով, Հայաստանը և Պարթևական տերությունը պետք է որ շարունակեին դաշնակցային հարաբերությունները երկուսին էլ սպառնացող հռոմեական ագրեսիայի դեմ, սակայն վերը բերված պատճառներով Արտավազդ II-ի կառավարման վերջում այդ դաշնակցությունը ժամանակավորապես խզվել էր։ Հանգամանքների բերումով դաշնակցությունը խզող կողմը ավելի շուտ Հայաստանն էր։ Պարթևական տերությունն այս ժամանակաշրջանում էլ կարծես թե շարունակում էր Հայաստանի նկատմամբ վարել նույն քաղաքական գիծը, ձգտելով վերահաստատել նախկին դաշնակցությունը։ Համենայն դեպս, ո՛չ Անտոնիոսի պարթևական արշավանքի ժամանակ և ոչ էլ մինչև նրա կողմից Հայաստանի գրավումը, Պարթևական տերության կողմից Հայաստանի նկատմամբ թշնամանքի որևէ դրսևորման մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում։

Հռոմի տիրապետությունն Արևելքում վերականգնելուց հետո Անտոնիոսը պատրաստվում էր իրականացնել Կեսարի հղացած պարթևական արշավանքը՝ Հայաստանի վրայով։ Սակայն ի տարբերություն Կեսարի, Անտոնիոսը վաղաժամ համարեց օկուպացնել Հայաստանը, ավելի ձեռնտու համարելով վերջինիս զորական ուժն օգտագործել ընդդեմ պարթևների[21]։ Պարթևական արշավանքը սկսելուց առաջ Անտոնիոսը պետք է Հայաստանը կրկին ներքաշեր հռոմեական ազդեցության ոլորտը՝ վերանորոգելով Հռոմի հետ նրա «բարեկամությունն ու դաշինքը»։ «Այս պրոբլեմի լուծման անհրաժեշտությունը բխում էր արշավանքի նախագծի բուն էությունից, որը կառուցված էր Հայաստանը պատերազմի մեջ ներքաշելու հաշվարկով, որպեսզի դրանով իսկ հնարավոր լիներ օգտագործելու նրա զորական ուժերը»[22]։ Այս առումով հայ-պարթևական դաշինքի խզումը զուգադիպեց Անտոնիոսի շանքերին և զգալիորեն դյուրացրեց դրանց իրականացումը։

Մ. թ. ա. 37 թ. վերջին Անտոնիոսի լեգատ Կանիդիոս Կրասոսը, զորական մեծ ուժերով, դիվանագիտական առաքելությամբ ուղարկվեց Հայաստան, Իբերիա և Աղվանք՝ այս երկրները Հռոմի հետ նորից դաշնակցության հակելու[23]։ Նկատի առնելով Հռոմի կողմից Հայաստանն օկուպացնելու հավանականության վտանգը (պարթևների հետ խզված դաշնակցության պայմաններում), Արտավազդ II-ը ստիպված էր կրկին ճանաչել իրեն Հռոմի «դաշնակից և բարեկամ»՝ համաձայնվելով իր զորքերով մասնակցելու պարթևական արշավանքին։

Հայաստանը կրկին հայտնվեց «մուրճի և զնդանի» միջև։ Նրան հարկադրում էին Պարթևական տերության դեմ պատերազմին մասնակցել Հռոմի կողմում, ինչում նա բնավ շահագրգռված չէր։ Հռոմի հաղթանակը միայն նոր սպառնալիքներ կառաջացներ Հայաստանի անկախությանը։ Մյուս կողմից, արքայազն Բակուրի և Օրոդես II-ի մահվամբ ժամանակավորապես խզվել էր դաշնակցությունը պարթևների հետ։ Ստեղծված իրավիճակում Հայաստանի համար լավագույն և բնա-

---

[20] „Cambridge ancient history. Cambridge Mass.", vol. X, 1934, p. 72—73.

[21] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 257։

[22] С. Тер-Исраелян, Место армянской конницы в военном плане римского командования в связи с началом парфянского похода М. Антония («Научные труды Арм. гос. пед. института», № 1, Ереван, 1966, с. 107).

[23] T. R. Holmes, The architect of the Roman Empire, Oxford, 1928, p. 122.

կան ելքը երկու տերությունների նկատմամբ չեզոքության, սեփական զորական ուժերը հայրենիքի անկախության պաշտպանության համար պահպանելու քաղաքականությունն էր, որպիսին է փորձեց վարել Արտավազդ II-ը։ Այս իմաստով պետք է հասկանալ Դիոն Կասիոսի խոսքերը, որ «Հայոց արքան... երբ նա պետք է որ օգներ հռոմեացիներին, ինչպես ասում են ոմանք, չարեց դա և չմիացավ Անտոնիոսին, այլ վերադարձավ իր երկիրը»[24]։ Հետագա իրադարձությունները, սակայն, ցույց տվեցին, որ Հայաստանի չեզոքության քաղաքականությունը այն պայմաններում, երբ տերություններից որևիցե մեկի գերակշռության հարցը Մերձավոր արևելքում դեռևս լուծված չէր, անընդունելի էր և՛ Հռոմի, և՛ պարթևների համար։

Անտոնիոսի պարթևական արշավանքը տխուր արդյունք ունեցավ։ Հռոմեացիք մեծ կորուստներ տվեցին, իսկ Հռոմի հեղինակությանը ծանր հարված հասցվեց[25]։ Լայնորեն տարածվեց այն կարծիքը, որ պարթևներն իրենց երկրում անհաղթելի են։ Արշավանքի անհաջողության մեջ Անտոնիոսը մեղադրեց Հայոց արքա Արտավազդ II-ին և «խիստ ծարավի էր նրանից դրա համար վրեժխնդիր լինելու»[26]։ Տարբեր պատրվակներով իր մոտ հրավիրելով Արտավազդ II-ին և հաջողության չհասնելով, Անտոնիոսը մ. թ. ա. 34 թ. մեծ բանակով ներխուժեց Հայաստան, խաբեությամբ ձերբակալեց Հայոց արքային և տարավ Ալեքսանդրիա։ Նվաճված Հայաստանի թագավոր հայտարարվեց Անտոնիոսի և Կլեոպատրայի փոքրահասակ որդի Ալեքսանդրը։

Ինչպես իրավացիորեն մատնանշված է գրականության մեջ, Անտոնիոսի կողմից Հայաստանի գրավման և Արտավազդ II-ի «դավաճանության» մտացածին մեղադրանքի իրական պատճառն այն էր, որ Անտոնիոսի՝ որպես զորավարի, հեղինակությունը կարոտ էր «թշնամու նկատմամբ հաղթանակի, իսկ զորքին վճարելիք միջոցները՝ համալրման, որպիսի հնարավորություն Անտոնիոսին ընձեռել կարող էր տվյալ պարագաներում միայն Հայաստանը»[27]։

Հռոմեական գերությունից խուսափեց միայն Արտավազդ II-ի ավագ որդին՝ Արտաշեսը, որին հայոց զորքերը հոր փոխարեն ընտրեցին արքա։ Սակայն անհավասար պայքարում հռոմեական զորքերից պարտվելով, Արտաշես II-ը (մ. թ. ա. 30—20 թթ.) ստիպված էր հեռանալ երկրից և ապաստանել Պարթևական արքունիքում[28]։

Անտոնիոսի կողմից Հայաստանի այսքան հեշտ նվաճումը հետևանք էր թե՛ հայ-պարթևական դաշնակցության խզման և թե Ատրպատականի արքա Արտավազդի դիրքորոշման, որը, գրժտվելով Հրահատ IV-ի հետ և ցանկանալով հայոց Արտավազդ II-ից վերժխնդիր լինել այն բանի համար, որ նա «հռոմեական զորքերին թույլատրել է անցնել իր երկրով» դեպի Ատրպատական[29], բանակցությունների մեջ էր մտել Անտոնիոսի հետ և ի վերջո նրա հետ դաշինք կնքեց ընդդեմ պարթևների, իր դստերը ամուսնացնելով Անտոնիոսի որդու «Հայոց արքա» Ալեքսանդրի հետ[30]։

Ատրպատականի և Հռոմի դաշնակցությունը լուրջ սպառնալիք ստեղծեց Պարթևական տերությանը։ Այս իրավիճակում բնական էր, որ հանձին հռոմեական լուծը թոթափելու համար պայքարող հայ ժողովրդի և Արտաշես II-ի Պարթևական տերությունը պետք է տեսներ իր օրինական դաշնակցին ու ամեն կերպ օժանդակեր այդ պայքարին։ Օգտվելով մ. թ. ա. 31 թ. Ակցիումի ճակատամարտում Օկտավիանոսից Անտոնիոսի կրած պարտությունից, որի հետևանքով Հայաստանը կառավարող Ատրպատականի Արտավազդ թագավորը զրկվեց հռոմեական օժանդակությունից[31], Արտաշես II-ը պարթևների հետ դաշնակցած, կարողացավ վերագրավել Հայաստանը և վերականգնել հայրենիքի անկախությունը[32]։ Ի նշանավորումն այդ փաստի և ի

---

[24] Cass. Dio, XLIX, 25, 5.

[25] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 266։

[26] Cass. Dio, XLIX, 31, 2—3.

[27] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 266։

[28] Cass. Dio., XLIX, 39—40.

[29] Cass. Dio., XLIX, 33.

[30] Plutarchi, Antony, 50; Josephus Flavius, Antiquitatae Iudicae, XV, 104.

[31] Հայաստանը կառավարող Մար Արտավազդին Անտոնիոսը տրամադրել էր հռոմեական զորամասեր և նրանից ստացել ատրպատական հեծելազոր։ Ակցիումի ճակատամարտին պատրաստվելով, նա հետ կանչեց իր զորքերը, բայց և չվերադարձրեց Մար Արտավազդի հեծելազորը, ինչը ցուցադրեց սրա պարտությունը։

[32] Cass. Dio, LI, 16, 2.

վրէժ դերության մեջ Արտավազդ II-ի մահապատժի, Հայաստանում գտնվող բոլոր հռոմեացիները (առևտրականներ, հարկահավաքներ, ռազմագերիներ) ոչնչացվեցին[33]։ Հայ-պարթևական գաշնակցությունը այսպիսով, սկիզբ առնելով Արտավազդ II-ի կառավարումից, որոշ ընդմիջումներով շարունակվեց նաև Արտաշես II-ի օրոք։

Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության վարած քաղաքականության մեջ նոր փոփոխություն կատարվեց մ. թ. ա. 20 թ. կնքված հռոմեա-պարթևական համաձայնագրի հետևանքով։

Մի քանի անհաջող փորձեր անելով դիվանագիտորեն համաձայնության գալու Պարթևական տերության հետ, Օգոստոս կայսրը, աղբյուրների վկայությամբ, մեծ զորաբանակով շարժվում է դեպի Եփրատ։ Հռոմի կողմից սա ոչ թե պատերազմի նախապատրաստություն էր, այլ «ռազմադիվանագիտական մի ցույց էր, որը պետք է նպաստեր Հրահատ IV-ի հետ համաձայնագրի կնքմանը և Արևելքում Հռոմի գերիշխանության հաստատմանը»[34]։ Մ. թ. ա. 20 թ. մայիսին Հռոմի և Պարթևական տերության միջև կնքվում է պայմանագիր[35]։ Ստրաբոնի ցուցումը, որ «Եփրատը Պարթևական տերության սահմանն է»[36], թույլ է տալիս ենթադրել, որ ըստ պայմանագրի պարթևները հրաժարվել են Եփրատից արևմուտք ընկած տարածքների նկատմամբ հավակնություններից։ Պայմանագրի համաձայն պարթևները վերադարձրին Կրասոսի և Անտոնիոսի լեգեոնների խլված դրոշները և ողջ մնացած գերիներին։ Ա. Ստեփանյանի բնորոշմամբ, Օգոստոսի այս քաղաքականության նպատակն էր ստեղծել քաղաքական մի ամուր սիստեմ, որը պետք է ապահովեր Հռոմի գերիշխանությունն Առաջավոր Ասիայում, իսկ դրա հաջող իրականացումն էլ հնարավոր էր միայն Հայաստանի նկատմամբ խիստ հսկողության սահմանումով[37]։ Հռոմեա-պարթևական այս համաձայնագիրը, անշուշտ, վերաբերում էր նաև Հայաստանին, թեև այդ մասին աղբյուրներում ուղղակի տեղեկություններ չեն պահպանվել։ Դիոն Կասիոսը հաղորդում է, որ հայերից ոմանք Օգոստոս կայսրից խնդրում են Արտաշես II-ի փոխարեն թագավորեցնել նրա եղբորը՝ Տիգրանին, որը Հռոմում պատանդ էր[38]։ Փաստորեն Հռոմի ռազմադիվանագիտական ճնշման տակ Արտաշես II-ը դավադրաբար սպանվում է և Հայաստանում թագավորեցվում է Տիգրան III-ը (մ. թ. ա. 20—6 թթ.)։ Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության քաղաքականությունը Հռոմեապարթևական համաձայնագրի հետևանքով պասիվ բնույթ է ընդունում։ Սկսած մ. թ. ա. 20 թ. Պարթևական տերությունը համարյա թե չի խառնվում Հայաստանում ծավալվող իրադարձություններին, լռելյայն հանդուրժելով Հայաստանի գահակալության խնդրի լուծման Հռոմի գործողությունները։

Որո՞նք էին պարթևական պասիվ, հանդուրժողական քաղաքականության պատճառները։ Ինչպես դիպուկ նշել է Ի. Գոլովկոն «Մ. թ. I դարի շեմին Պարթևական տերությունը ներքաղաքական սուր պայքարի շրջան էր ապրում, ինչին բոլոր միջոցներով օժանդակում էր Օգոստոսը. դրանում է թաքնված Արևելքում նրա դիվանագիտական որոշ հաջողությունների գաղտնիքի լուծումը»[39]։ Ի հաստատումն ասվածի, կարելի է հիշատակել Պոմպեոս Տրոգոսի և Դիոն Կասիոսի հաղորդումները մ. թ. ա. 20-ական թվականներին Արշակունյաց տոհմից ոմն Տրդատի ապստամբության մասին, որը մի քանի տարի շարունակ Հռոմի օժանդակությամբ վիճարկում էր պարթևական գահը Հրահատ IV-ի հետ[40]։ Գ. Կոշելենկոյի խոսքերով, այս ժամանակաշրջանում «Պարթևական տերության մեջ սկսվում է հելլենիստական ժառանգության վերամշակումը և պետական կառավարման սիստեմում ու մշակույթի մեջ տեղական, արևելյան հիմքերի հաստատումը... Այս խնդրի նկատմամբ իշխող խավերի տարբեր մոտեցումը և լուծման տարբեր մեթոդներն էլ ծնեցին այն անվերջանալի երկպառակությունները Պարթևստանում, որոնք պետական իշխա-

---

[33] Jos. Flav., Ant. Jud. XV, 4, 3.

[35] P. Orosius, Historia Adversum Paganos, VI, 21, 29.

[36] Strabo, Geographica, XXVI, 1, 28.

[37] Ա. Степанян, Борьба Армении и Парфии с римской экспансией и Ранденский договор (автореферат канд. дисс.), Ереван, 1975, с. 4—6.

[38] Cass. Dio, LIV, 9, 3—4.

[39] И. Головко, Римско-парфянские политические взаимоотношения в I в. до н. э. (автореферат канд. дисс.), Одесса, 1952, с. 15.

[40] Just., XLII, 5, 4—6; Cass. Dio, LI, 18, 3.

նության թույլ կենտրոնացվածության պայմաններում էապես թուլացրին նրա դիրքերը Հռոմի հետ Առաջավոր Ասիայում ազդեցության ոլորտների համար վեճում[41]։ Ներքաղաքական սուր պայքարի մասին է վկայում Հրահատ IV-ի կողմից մ. թ. ա. 10 թ. կամավոր կերպով իր 4 տղա որդիներին Հռոմ պատանդ ուղարկելը[42]։ Ստրաբոնի և Տակիտոսի բացատրությամբ Հրահատ IV-ի նպատակն էր այդպիսով կանխել իր դեմ ուղղված դավադրությունները, քանի որ ըստ պարթևական օրենքների դահի հավակնորդ կարող էր լինել միայն ծագումով Արշակունի անձնավորությունը[43]։

Սրանք էին Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության պասիվ, հանդուրժողական քաղաքականության հիմնական պատճառները։ Պարթևական քաղաքականության այս գիծը շարունակվեց մինչև մ. թ. 16 թ.։

Մ. թ. 11 թ. պարթևական գահին նստած հռոմեական դրածո Ոնոն I-ի դեմ ապստամբություն է սկսվում։ Պարթևական ավագանին իշխանության է հրավիրում Արտավան III-ին, որը այդ ժամանակ Ատրպատականի արքան էր[44]։ Տակիտոսը հաղորդում է, որ Արտավանը տարյամբ Արշակունի էր, դահերի մեջ մեծացած[45]։ Ջ. Անդերսոնն այն կարծիքին է, որ Արտավան III-ը հայրական գծով սերում էր Ատրպատականի արքայական տնից, իսկ քանի մոր կողմից էլ Արշակունի էր, ուրեմն և տեղական իշխող դինաստիայի վերացումից հետո օրինական կարգով դարձել էր Ատրպատականի թագավոր[46]։ Ա. Ստեփանյանի կարծիքով Արտավան III-ը սկյութական արիստոկրատիայի ներկայացուցիչն էր պարթևական գահին, սերված Պարթևստանի հյուսիս-արևելյան շրջաններից, և նրա ձգտումը՝ վերականգնել Աքեմենյանների տերության սահմանները, այս քաղաքական խմբավորման ծրագիրն էր հանդիսանում[47]։

Մ. թ. 12 թ. Արտավան III-ը հաստատվում է պարթևական գահին։ Տակիտոսը հաղորդում է, որ Ոնոնը փախավ Հայաստան և այստեղ «թագավորելու ընդունվեց»[48]։ Սակայն Արտավան III-ը Հռոմին սպառնում է պատերազմով, եթե նրա օժանդակությամբ իր ախոյանը շարունակի կառավարել Հայաստանում։ 16 թ. Ասորիքի հռոմեական կուսակալ Կրետիկոս Սիլանը, խուսափելով Արտավան III-ի հետ պատերազմից, Ոնոնին հրավիրում է իր մոտ և վերցնում պատվավոր կալանքի։ Նույն թվականին Արտավան III-ը փորձում է հայկական գահին հաստատել իր Օրոդես որդուն[49], սակայն հայ ժողովրդի և ավագանու հակակրանքի պատճառով հաջողության չի հասնում։ Արտավանի այս քայլը սկիզբն էր Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության նոր՝ ագրեսիվ, նվաճողական քաղաքականության, որը շարունակվեց Արտավան III-ի կառավարման ողջ ընթացքում, ինչպես և նրա անմիջական հաջորդների՝ Վարդանի և Գոտարզի կառավարման օրոք։

Ո՞րն էր այս քաղաքականության ագրեսիվությունը։ Պարթև տիրակալի որդու թագավորելով՝ Հայաստանը վերածվում էր Պարթևական տերությանը հպատակ նույնպիսի մի թագավորության, որպիսին էին Ատրպատականը, Մարաստանը, Էլամը[50]։ Սակայն, ինչպես կտեսնենք ստորև, Հայաստանին տիրանալը միայն նվաճողական ավելի լայն ծրագրերի մի մասն էր։

Արտավան III-ի առաջին փորձը՝ տիրանալու Հայաստանին, հաջողություն չունեցավ։ Պարթևական գահին իրեն դեռևս ամուր չզգալով շարունակվող ներքաղաքական պայքարի պայմաններում, Արտավան III-ը լռելյայն հաշտվեց Հռոմի կողմից 17 թ. Հայաստանի գահին հայ ազնվականության և ժողովրդի թեկնածու Զենոն-Արտաշեսի հաստատմանը։ Արտավանն անգամ Հռոմին առաջարկեց վերականգնել հռոմեա-պարթևական բարեկամությունն ու դաշինքը, խնդրելով Ասորիքից հեռացնել իր իշխանության դեմ պարթև ավագանուն խռովության հրահրող

---

41 Г. Кошеленко, Внутриполитическая борьба в Парфии (ВДИ, 1963, № 3, с. 56).

42 Res gestae divi Augusti, 32.

43 Tacitus, Annales, III, 1; Strabo, XVI, 1, 28.

44 Jos. Flav., Ant. Iud., XVIII, 48.

45 Tac., Ann., III, 3.

46 CAH, vol. X, p. 278.

47 Ա. Степанян, Նշվ. աշխ., էջ 14։

48 Tacit., Ann., II, 4.

49 Jos. Flav., Ant. Iud., XVIII, 52.

50 U. Kahrstedt, Artabanos III und seine Erben, Bern, 1950, S. 46—47.

Ոնոնին[51]։ Նշենք, որ Արտավան III-ի առաջարկը հետապնդում էր նաև մեկ այլ, ոչ պակաս կարևոր, քաղաքական նպատակ, և այն ընդունելով Հռոմը փաստորեն նրան ճանաչելու էր որպես Պարթևական տերության օրինական գահակալ։

Հայաստանը հպատակեցնելու իր հեռանկարային ծրագրից, սակայն, Արտավան III-ը չհրաժարվեց։ 34 թ. Զենոն-Արտաշեսի մահվանից հետո նա Հայաստանում թագավորեցրեց իր ավագ որդուն՝ Արշակին (34—36)[52]։

Հայաստանի վրա մ. թ. ա. I դ. վերջից սկսած Հռոմի և Պարթևական տերության գործադրած մշտական քաղաքական ճնշումը և Արտաշիսյան հարստության անկումը երկրում առաջացրել էին ներքաղաքական լարված իրավիճակ, մեծապես աղդելով հայ հասարակության տարբեր խմբավորումների քաղաքական կողմնորոշման վրա՝ ծնունդ տալով քաղաքական մի շարք հոսանքների։ Հայաստանի գահին հայ հասարակության կողմից Զենոն-Արտաշեսի գահակալության սիրահոժար ընդունումը կարծել են տալիս, որ Արշակի գահակալումը, որն «ամենայն հավանականությամբ շոշափում էր երկրի անկախության շահերը»[53], նույնպես հակառակ էր հայ ավագանու և ժողովրդի մեծամասնության՝ Հայաստանի քաղաքական անկախությունը վերականգնելու ձգտմանը։ Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ Հռոմի դրդմամբ կազմակերպված Արշակի սպանությանը հաջորդած Հայաստանի գահի շուրջը ծավալված գահակալական պայքարում և երկրում ընթացող պատերազմական գործողությունների հանդեպ հայ ավագանին չեզոք դիրք է գրավում, և պատերազմող կողմերից որևէ մեկին նրա հարելու մասին աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն հաղորդում։

Այն հանգամանքը, որ Արտավան III-ը հակառակ հայ ավագանու և ժողովրդի ցանկության իր որդուն թագավորեցրեց Հայաստանում, դրանով իսկ երկիրը վերածելով իր տերության կախյալ թագավորություններից մեկի, մեզ իրավունք է տալիս պարթևական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ այս ժամանակաշրջանում համարել ագրեսիվ, նվաճողական։ Դրա յավդուն վկայությունն է և այն, որ Արտավանի կողմից Հայաստանի հպատակեցումը Աքեմենյանների տիրապետության սահմանները վերականգնելու ագրեսիվ քաղաքական ծրագրի մի մասն էր։ Ըստ Տակիտոսի, «նա հռոմեացիներին վիրավորանք հասցրեց, մարդկանց ուղարկելով պահանջելու իրեն հանձնել Սիրիայում և Կիլիկիայում Ոնոնի թողած գանձերը, խոսում էր պարսիկների և մակեդոնացիների նախկին սահմաններից, ամբարտավանանալով և սպառնալով ներխուժել Կյուրոսի և Ալեքսանդրի տիրույթները»[54]։ Ի կատարումն իր այս ծրագրերի, Արտավանը ավարառական արշավանք է կատարում Կապադովկիա[55]։

Արտավան III-ի ագրեսիվ նկրտումները սանձելու և իր տիրույթները պաշտպանելու համար Հռոմը, մեծ գումարներ հատկացնելով, Իբերիայի և Աղվանքի թագավորներից հակապարթևական կոալիցիա կազմակերպեց[56]։ Հայոց գահի հավակնորդ Միհրդատ Իբերացու սադրանքով Հայաստանում թագավորող Արշակը դավադրաբար սպանվեց։ Հռոմեական Ասորիքի կուսակալ նշանակվեց ճարպիկ դիվանագետ Լուցիոս Վիտելիոսը, որը սկսեց հաջողությամբ դավադրություններ հրահրել Արտավան III-ի դեմ։ Հռոմում ապրող Հրահատ IV-ի թոռ Տրդատը հայտարարվեց պարթևական գահի օրինական հավակնորդ և Հռոմի օժանդակությամբ տիրացավ Միջագետքին[57]։ Հռոմի հրահրած խարդավանքների հետևանքով Արտավան III-ը նույնիսկ ժամանակավորապես զրկվեց գահից։ Այս ամենի շնորհիվ Հռոմը կարողացավ վերահաստատել իր գերիշխանությունը Հայաստանի վրա։ 37 թ. պարթևական գահին վերահաստատված Արտավան III-ը ստիպված էր Հռոմի հետ հաշտություն կնքել[58]։

---

[51] Tacit., Ann., II, 58.

[52] Suetonius, Tiberius, 41; Jos. Flav., Ant. Iud., XVIII, 4; Cass Dio, LVIII, 26.

[53] Ա. Ստեփանյան, Политическая обстановка в Армении во втором десятилетии I в. н. э. («Сборник аспирантских научных трудов Арм. пед. инстит. им. Х. Абовяна», № 5, вып. 3, Ереван, 1971, с. 121).

[54] Tacit., Ann., VI, 31.

[55] Cass. Dio, LVIII, 26, I.

[56] Jos. Flav., Ant. Iud., XVIII, 97.

[57] Tacit., Ann., VI, 32; Cass. Dio, LXVIII, 26, 2.

[58] Suet. Gaius, 14; Jos. Flav., Ant. Iud., XVIII, 100—101; Cass. Dio LIX, 27, 3.

Պարթևական տերության մեջ դրանից հետո էլ դեռ շարունակվեց ներքաղաքական սուր պայքարը։ Արտավան III-ի մահից հետո գահին տիրանալու համար տևական պայքար էր ընթանում Վարդանի և Գոտարզի միջև։ Տակիտոսի և Հովսեփոս Փլավիոսի մոտ պահպանված ուշագրավ վկայություններ հիմք են տալիս պնդելու, որ Պարթևական տերության ագրեսիվ նվաճողական քաղաքականությունը շարունակվել է և Վարդանի ու Գոտարզի կառավարման ընթացքում։ Ըստ Տակիտոսի, Սելևկիայի պաշարումն ավարտելով, նման հաջողությունից ոգևորված Վարդանը «լի էր վճռականությամբ վերադարձնելու Հայաստանը և նման փորձ կձեռնարկեր, եթե Ասորիքի կուսակալ Վիբիոս Մուրսը նրան պատերազմով չսպառնար»[59]։ Տակիտոսը նաև հաղորդում է, որ այս արշավանքը նախապատրաստելու նպատակով Վարդանը այցելել է իր ...երության կարևորագույն մարդերը և հպատակ թագավորություններ։ Այս հաղորդումը մանրամասներով լրացնում է Հովսեփոս Փլավիոսը, պատմելով, որ Վարդանը Ագիաբենեի Իզատես թագավորին այցելելով՝ «փորձում էր նրան համոզել զորական ուժեր նախապատրաստել և մասնակցել այս արշավանքին»[60]։

Վարդանի ծրագրած արշավանքը չիրագործվեց։ Դրա պատճառը ոչ թե Ասորիքի կուսակալի սպառնալիքներն էին և կամ էլ Իզատեսի արշավանքին մասնակցելուց հրաժարվելը, այլ Գոտարզի հետ վերսկսված գահակալական պայքարը։ Վարդանի գավազրական սպանությունից հետո էլ գահին տիրացած Գոտարզը համարյա մինչև իր մահը ստիպված էր գահակալական պայքարը շարունակել հռոմեական նոր թեկնածու Միհրդատի դեմ։ Ասվածն իրավունք է տալիս պնդելու, որ Վարդանի և գուցե Գոտարզի կառավարման ժամանակաշրջանում էլ, արտաքուստ բացահայտորեն չդրսևորվելով, Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության ագրեսիվ քաղաքականությունը շարունակվում էր։

Պարթևական տերությունում Արտավան III-ի կառավարման վերջում սկիզբ առած գահակալական տևական պայքարը, որին Հռոմն ամեն կերպ օժանդակում էր, վերջինիս հնարավորություն տվեց Հայաստանը պահել իր գերիշխանության տակ, և հայոց գահին հաստատել Իբերական արքայատան ներկայացուցիչ Միհրդատին, որը որոշ ընդմիջումով կառավարեց 37—51 թվականներին։ Հռոմի թողտվությամբ կազմակերպելով նրա սպանությունը, 51 թ. հայոց գահին տիրացավ Միհրդատի եղբորորդի Հռադամիզդը, որի արյունալի ոճիրը և դաժան կառավարումն արժանացան հայ ժողովրդի բացահայտ ատելությանն ու թշնամանքին։

Գահակալական երկարատև պայքարը Պարթևական տերությունում ավարտվեց 51 թ. Վաղարշ I-ի (51—75) գահակալությամբ, որից սկսած Պարթևական տերության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ որակապես փոխվեց։ Իր քաղաքական ծրագրում Վաղարշ I-ը, համաձայն Տակիտոսի, Հայաստանը համարելով Արշակունիների տոհմական տիրույթներից երրորդը՝ Պարթևստանից և Ատրպատականից հետո, հայտարարում է, որ «գերադասում է իր նախնիների տիրույթը պահպանել հենվելով առավելապես արդարության վրա, քան արյուն հեղելով, հիմնվելով առավելապես իրավունքի վրա, քան զենքի»[61]։ Այժմ արդեն Հայաստանը դիտելով որպես անկախ ինքնուրույն պետություն, Պարթևական տերությունը ձգտում էր միայն հայոց գահին Արշակունի թագավոր հաստատել, դինաստիական ազգակցությամբ չեզոքացնել Հայաստանի թշնամության վտանգը։ Վարելով հայ ավագանուն և ժողովրդին իր կողմը գրավելու քաղաքականություն, Վաղարշ I-ը Հայաստանից վտարելով Հռադամիզդին և գահը հանձնելով եղբորը՝ Տրդատին, երկրից դուրս է բերում իր զորքերը։ Լավագույն ապացույցը, թե ինչպիսի հաջողություն ունեցավ հայ ժողովրդին սիրաշահելու և նրա սովորույթներն ու իրավունքները հարգելու քաղաքականությունը, Հռադամիզդի կողմից գահին տիրանալու նոր փորձի դեմ ծագած ժողովրդական ապստամբությունն է և Տրդատի առջև հայոց արքայանիստ քաղաքներ Արտաշատի և Տիգրանակերտի դարպասների հոժարակամ բացումը, ինչպես նաև հռոմեական բանակների դեմ ծավալված հետագա պայքարում հայերի ակտիվ մասնակցությունը։ Ա. Ստեփանյանը իրավացիորեն գրում է, որ «Արտաքին քաղաքականության մեջ Վաղարշ I-ը խնդիր էր դնում նիստրատը դարձնել անսասան սահման Հռոմի և Պարթևական տերության միջև։ Իսկ դրա համար առաջին հերթին ահրաժեշտ էր վերականգնել հայ-պարթևական համագործակցությունը՝ Հռոմի ճնշմանը դիմադրվելու համար»[62]։

---

59 Tacit., Ann., XI, 10.
60 Jos. Flav. Ant. Iud., XX, 69.
61 Tacit., Ann., XV, 2.
62 А. Степанян, Борьба Армении и Парфии..., с. 17.

Հանրագումարի բերելով քննարկվածը, կարելի է հայ-պարթևական հարաբերությունների առաջին ժամանակահատվածում՝ մ. թ. ա. II դ. վերջ—մ. թ. I դ. առաջին կես, Հայաստանի նկատմամբ Պարթևական տերության վարած քաղաքականությունը պայմանականորեն բաժանել հետևյալ հինգ փուլերի.

1-ին փուլ՝ մ. թ. ա. II դ. վերջից— մ. թ. ա. I դ. 50-ական թվականներ— Ի սկզբանե Հայաստանը է Պարթևական տերությունը մրցակցում են թուլացող և մասնատվող Սելևկյան տերության տարածքային ժառանգորդման հարցում, և եթե առավելությունը նախապես պարթևների կողմն էր, ապա Տիգրան Մեծի կառավարման ընթացքում գերիշխող կողմը Հայաստանն էր։

2-րդ փուլ՝ մ. թ. ա. 53—20 թթ.—Պարթևական տերությունը և Հայաստանը հաշտությամբ գոյակցում են՝ պայքարելով Հռոմի դեմ և մի շարք ավարառուական արշավանքներ կատարում Պաղեստին ու Ասորիք։

3-րդ փուլ՝ մ. թ. ա. 20 թ.— ա. թ. 16 թ.— Օգոստոսի օրոք ուժեղացած Հռոմի ռազմաքաղաքական ճնշման և ներքաղաքական լարված պայքարի հետևանքով Պարթևական տերությունը վարում է պահպանողական քաղաքականություն, հանդուրժելով Հայաստանի գահակալության խնդրի լուծման Հռոմի բոլոր գործողությունները։

4-րդ փուլ՝ մ. թ. 17—50 թթ.— Արտավան III-ի և նրա անմիջական հաջորդների կառավարման ընթացքում Պարթևական տերությունը վարում է արտաքին ագրեսիվ, նվաճողական քաղաքականություն, ձգտելով վերականգնել Աքեմենյանների տերության սահմանները, իսկ Հայաստանը վերածել տերության կախյալ թագավորություններից մեկի։

5-րդ փուլ՝ 51—63 թթ.— Ներքաղաքական պայքարի ժամանակավոր դադարի շնորհիվ Պարթևական տերությունը ակտիվ պայքար է ծավալում Հայաստանը Հռոմի գերիշխանությունից դուրս բերելու և նրա դահին Արշակունի թագավոր հաստատելու համար, ինչը օբյեկտիվորեն համընկավ հայ ժողովրդի հակահռոմեական ազատագրական պայքարին։

ПОЛИТИКА ПАРФЯНСКОЙ ДЕРЖАВЫ ПО ОТНОШЕНИЮ К АРМЕНИИ (опыт периодизации)

АРМЕН ХАЧИКЯН

Резюме

Подробный анализ парфяно-армянских отношений с начала их возникновения и до заключения Рандейского догозора позволяет политику Парфянской державы по отношению к Армении условно подразделить на следующие этапы: I этап: конец II в. до н. э.—50-ые годы I в. до н. э.—соперический. Парфянская держава и Армения сталкиваются в вопросе территориального наследия разваливающейся державы Селевкидов, и если вначале преимущество было за Парфией, то в период правления Тиграна II верх взяла Армения; II этап: 53—20 гг. до н. э.—союзнический. Парфянская держава в союзе с Арменией успешно противостоит угрожавшей обеим агрессии Рима и проводит в ответ несколько успешных походов в Сирию и Палестину; III этап: 20 г. до н. э.—16 г. н. э.—пассивный. Под усилившимся при Августе военно-политическим давлением Рима и вследствие острой внутриполитической борьбы Парфянская держава, не препятствуя, признает все действия Рима в вопросе престолонаследия Армении; IV этап: 17—50 гг. н. э.—агрессивный. В правление Артабана III и его ближайших преемников Парфия проводит захватническую политику, стремясь восстановить границы Ахеменидов и превратить Армению в одно из зависимых царств своей державы; V этап: 51—63 гг. н. э.—активный. Вследствие временного ослабления внутриполитической борьбы Парфянская держава активно включается в борьбу с Римом за утверждение на троне Армении Тиридата Аршакида, впредь рассматривая страну как суверенное государство, что объективно совпало с антиримской освободительной борьбой армянского народа.